25 [illegible]

9(47.92)
Ա-12

Տեքստ՝ Իր. ԱԲԱՇԻՁԵԻ Թարգմ՝ Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

# 25 ՓԵՏՐՎԱՐԻ

Նկար՝ Ի. ՏԻՄՈՖԵԵՎԻ



ՅԱԽԵԼԳՍՄԻ 1933

(47).92
Ա-12 11-.01.2013




Յերեք հարևան ազգերի միջև կապիտալիստները վրեժ և թշնամություն էյին սերմանում, նրանք տիրացել էյին մեր յերկրների հարստություններին և կողոպտում էյին նավթը, քարածուխը ու այլ հանքերը։ Այսպես էր մինչև 1921 թվի փետրվարի 25-ը։

ՀՍՍՀ Арм ССР им. А. Мясникяна
61915-67

34-Ա



Գյուղացին, ինքնակալության տապալումից հետո յել չազատվեց կալվածատիրոջ ճանկերից։ Մենշևիկյան կառավարությունը կալվածատերերին տալիս էր՝ աշխատավոր ազգաբնակչությանը թալանելու բոլոր հնարավորությունները։ Կալվածատերերն էլ աշխատավոր գյուղացիության քրտինքով ձեռք բերած բերքով լցնում էյին իրենց ամբարները։



Մենշևիկյան կառավարությունը 1918 թվին, Թիֆլիսի նախկին Ալեքսանդրյան այգում գնդակահարեց աշխատավորների բոլշևիկյան միտինգը, վորով մի անգամ ևս ապացուցեց, վոր նա աշխատավորների կառավարությունը չէ։





Մենշևիկյան կառավարության զինված ուժերը արյան և կրակի մեջ խեղդեցին Դուշեթի ապստամբված գյուղացիներին, վորոնք յելել եյին մենշևիկների դեմ։



Չնայած կառավարության խստությանը, մեր կուսակցությունն ընդհատակյա բոլշևիկյան պայքար էր տանում սոցիալիստական-հեղափոխության հաղթանակի համար։

Մայիսմեկյան տոներին ձերբակալում էին աշխատավորներին և բանտերը լցնում։ Այնուամենայնիվ պատերին հայտնվում էին Մայիսմեկյան թռուցիկներ։



Մենշևիկյան կառավարությունը մեծ ուրախությամբ ճանապարհ տվեց Կարմիր բանակի կողմից հալածված դենիկինյաններին և Սև ծովով անցկացրեց, վորպեսզի նրանք՝ սև ռազմիկների գեներալ Վրանգելի հետ միանալով՝ կռվեն բոլշևիկների դեմ։

Մենշևիկների «ժողովրդական» գվարդիան շատ անգամ է արյան մեջ խեղդել աշխատավորների արդարացի ապստամբությունները. բայց կառավարության դեմ շարժումը քանի գնում՝ այնքան աճում էր և հաճախակի դառնում։



Կարմիր բանակը աշխատավորների բանակն է: Նա օգնում է աշխատավորներին: Նրա օգնությամբ Վրաստանի պրոլետարիատը՝ աշխատավոր գյուղացիների հետ միասին 1921 թվի փետրվարին հաստատեց Խորհրդային իշխանություն: Կարմիր բանակը խորհրդային սահմանների անսասան պահապանն է:



Մենշևիկները փախուստի ժամանակ քանդեցին և այրեցին յերկաթուղիները, կամուրջները, փորձելով իրենց դեմ կռվող աշխատավորների ճանապարհը կտրեն:



Մենշևիկները թալանի մատնեցին Վրաստանը, լցրին նավերը մեր հարստությամբ և փախան դեպի կապիտալիստական յերկրներ։





Խորհրդային Վրաստանում հաղթեց սոցիալիստական շինարարությունը. կառուցվեց քաղաքներ, ելեկտրոկայաններ, ֆաբրիկա-գործարաններ, [illegible] ճանապարհները, ազատագրված գյուղացիությունը ձեռք զարկեց գյուղի սոցիալիստական շինարարությանը—հանդես յեկան տրակտորներ և ուրիշ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, ծաղկեցին կոլխոզները։

ԳՐԱԿԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ ЛССР-Арм ССР

Ազատագրված գյուղացիությունը ձեռնարկեց գյուղի սոցիալիստական տնտեսությունը, հանդես յեկան տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ, աճեցին կոլեկտիվները։



Կարմիր բանակը սոցիալիստական հայրենիքի արթուն պահակն է, կոլտնտեսության լավագույն որդիները՝ աշխատանքի առաջավորները։ Ահա, թե ինչու ամբողջ աշխարհի աշխատավորները սիրում են Կարմիր բանակը։




1-20

Библиотека
Института
Академии Наук
СССР

9(47.92)
Ա-12

ՀՀ Ազգային գրադարան
NL0397479

4460